

**ՀԱՅ ԴՊՐՈՑ**

**Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ ԱՏՈՒԵՐԻ ՏԱԿ  
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՓԱԿՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ**

**Դոկտ. Հայր Զաւէն Արզումանեան**

Որքան կը մօտենայ Հ.Բ.Ը. Միութեան հարիրամեակը նոյնքան եւ աւելի ամպերը կը կուտակուին զայն անշքացնելու աստիճան, որ արդէն իսկ կատարուած իրողութիւն մըն է ինքնին, գլխատրաբար Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման անժամանակ, սխալ եւ հակազդեցիչ որոշումով: Յորեւի՜նական տարի պէտք էր հռչակուէր յառաջիկայ Զատիկէն սկսեալ Հայրապետական Կոնդակով, համազգային ծրագրումներով, ու միութեան շրջանային համապարփակ յայտագիրներով, լրջախոս ծանուցումներով, բոլորին համագործակցութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան համատեղումով, երբ ընդամէնը մի քանի ամիսներ մնացեր է միայն: Ու այդ բոլորէն եւ ոչ մին կատարուած է ցարդ, քանի որ երկու տարիներէ ի վեր թնճուկի վերածուած կրթական վսեմ այդ Հաստատութեան դժբախտ եւ անհակակշռելի փակումը գրաւած է միտքն ու ժամանակը սփիւռքահայ կեանքին: Հ.Բ.Ը. Միութիւնը ծնունդ առաւ 1906 թուի Ապրիլ ամսու Զատիկի Կիրակին, Գահիրէի մէջ, եւ քսանամեակ մը ետք Մելգոնեան Կրթական հաստատութիւնը՝ Կիպրոսի մէջ:

Բարեգործականը Միութիւն (միացեալ մարմին) մըն էր մինչեւ երէկ, որուն նկատմամբ անխափան սէր ու յարգանք կը տածուէր աշխարհասփիւռ հայութեան կողմէ, երբ պատկառելի նախագահները, յատկապէս մեզի ժամանակակից ազնուահոգի, իմաստուն, ուսումնասէր եւ ազգասէր ցկեանս Նախագահ Ալէք Մանուկեան, բարձրացուցին, հարստացուցին ու լիարժէք դարձուցին զայն: Ուրկէ՞ սակայն արտասահմանի մեծագոյն հայ կրթարանը փակելու այդ անփառունակ, անժամանակ եւ անհանդուրժելի որոշումը, սխալ ատենին մասնաւոր, երբ անոր փոխարէն, լարուած աշխատանքով հարկ էր պատրաստուիլ հարիրամեակին, այդ բացառիկ հանգրուանի տօնախմբութեան, ուռճացնելով շարքերն ու շէնցնելով հայատարած աշխատանքը, քան թէ յուսալքութեան եւ անդարմանելի կացութեան մատնելու հայութեան կարեւոր մէկ մասը: Ասկէ ետք ո՞ր կը մնայ հարիրամեակը: Մելգոնեան կրթական հաստատութեան փակումն է որ պիտի նշէ Միութեան հարիրամեակը: Ըստ երեւոյթին եւ դժբախտաբար՝ այդ:

Հարիրամեակը պիտի գայ ու անցնի անշուք եւ աղմկալի, ինչպէս արդէն իսկ կը տեսնենք: Յորեւի՜նական տարին պիտի անցնի առանց նոյնիսկ Մեծ Միութեան հաշտին, այլ անոր ի վնաս, մինչդեռ հարիրամեակը պէտք էր նշուէր համերաշխօրէն, գեղատիպ յուշամատեններու եւ փայլուն տեղեկագիրներու հրատարակութեամբ այս տարիէն սկսեալ: Անցեալին, երբ Միութեան յիմնամեակն ու եօթանասունհինգ ամեակը կը տօնուէին, պատշաճ ու դրական եւ խոստմնալից բովանդակութեամբ հեղինակաւոր գրիչներէ հասած հրատարակութիւններ կանխաւ կը հասնէին Միութեան անդամներուն եւ հայ ազգին առ հասարակ: Ո՞ր է հարիրամեակի ազդանշանը տուող գեղատիպ յուշամատենը, ուր փայլէին դէմքերն ու դէպքերը անցեալին ու մեր մօտաւոր անցեալին: Գիտակից ըլլալով մէկտեղ որ Մելգոնեանի փակման որոշումը կրնար ունենալ իր «արդարացուցիչ» պատճառները, թերեւս, սակայն վարիչները մոռցա՞ն արդեօք թէ հարիրամեակը թաքուն չէր, եւ իր անցեալի փայլուն համատեղութիւնը պիտի ցուցնէր ակնթարթի մը մէջ եւ շուտով զիրենք անելի մատնէր:

Անշուշտ, վերջին վայրկեաններուն ջանք պիտի թափուի կտորները հաւաքելով հարիրամեակը թերի եւ մասնակի կերպով նշելու: Մեծ Միութեան պատիւը սակայն կը պահանջէ համազգային եւ լիակատար, պետական եւ եկեղեցական միացեալ տօնակատարութիւն, եւ ոչ թէ մասնակի ու վիրաւոր ցոյց մը: Մելգոնեան Հաստատութեան տասնամեակներու վաստակն ու գոյութիւնը պիտի բացակային միանգամ ընդմիշտ որեւէ հարիրամեակի անուն կրող ձեռնարկներէ, եթէ նոյնիսկ պիտի կատարուին անոնք բաժանեալ ու միակողմանի ձեւով: Եթէ, ըսի, քանի որ Մելգոնեանի գոյապայքարը դատարաններու եւ օտար մարդոց ու կառավարութեանց ձեռքը անցած ըլլալով, ո՞վ պիտի մտածէ եւ ձեռնարկէ հարիրամեակը պատրաստելու աշխատանքին:

Արեւմտեան կողմն աշխարհի, հարաւային, արեւելեան եւ ծայրագոյն արեւելեան ափերուն սփռուած Միութեան պատուաբեր արգասիքը հիացում պատճառած է հայ ազգին ահա վերջին յիմնամեակին, ուր դպրոցներ, մարզադահլիճներ, թանգարաններ ու կրթական հաստատութիւններ կը կրեն անունները անգուգական Ալէք եւ Մարի Մանուկեաններուն, որոնք հարազատ հետետորդները եղան Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեաններուն: Միութեան հարիրամեակին հարիւր շեփոր պէտք է հնչեն անոնց փառքին ու յիշատակին, Մանուկեաններուն եւ Մելգոնեաններուն, փոխան կիսատ ու քեւեռ դարձած սփիւռքահայութեան վարանտ ու ճնշիչ մթնոլորտին:

Ինչ կը պակսէր Մելգոնեան Կրթական Հաստատութեան որ չդառնար այն ինչ որ եղաւ Երեւանի մէջ Ամերիկեան Համալսարանի պարագային, իմաստուն կարգադրութեամբ մը հաստատուելով զայն ի պէտս հայրենաբնակ երիտասարդութեան: Ընդհակառակը, Մելգոնեան շատ աւելի ունէր քան Երեւան, մնալու գէթ իր կարգավիճակին մէջ ու յառաջդիմելու: Երեւանի մէջ Ամերիկեան համալսարանը լիովին որդեգրուեցաւ Հ.Բ.Ը. Միութեան եւ ամերիկեան բարձրագոյն կրթական ծրագրի գործակցութեամբ:

Մելգոնեան ունի իր տասնամեակներու վաստակն ու փորձը, շէնքերու լիակատար յարմարութիւնները, հայ սփիւռքը, պետական նեցուկը, ազգին հիացումը, քաղաքական ու աշխարհագրական բացառիկ առաւելութիւնները: Ինչո՞ւ գրկել սփիւռքը իր հաստատուն ուսումնարանէն ու զայն շղարձել Ամերիկեան համալսարանի դասակարգին հաստատութիւն մը, նման Երեւանի ուսումնարանին: Կը մնար սիայն զայն օժտելու մնայուն հիմնադրամով եւ Ամերիկեան Տամալսարանի մը ներքին ակադեմիական կառոյցով, փոխանակ նահանջելու ու ազգին առջեւ փակելու ազնուագոյն այդ հաստատութիւնը: Նման քայլ մը լոջօրէն առնուելով պիտի իսկոյն քաշէր երիտասարդութիւնը դէպի ուսում եւ հայեցի կրթութիւն, ու ապա դէպի արեւմտեան ուսումնարաններ:

Անշուշտ համեմատութիւնները հասկանալի են: Երեւան թեկնածուներու առատութիւնը ունի ինչպէս նաեւ ամերիկեան յատուկ ուսման կարիքը: Չունի տնտեսական հիմքը որուն սակայն կը հասնին ազնուօրէն Տ.Բ.Ը. Միութիւնն ու բարերար անձինք: Տեշտ է այնտեղ, քանի շատ են երիտասարդները հոն, եւ արդիւնքն ալ անպայմանօրէն շօշափելի, մինչդեռ սփիւռքի պարագային պատկերը տարբեր է, հասկնալի է եւ սակայն ոչ անկարելի: Եղածը զարգացնել՝ յառաջդիմութիւն է, եւ սակայն զայն կասեցնել՝ իսկական ողբերգութիւն: Սփիւռքի մէջ ուսման ծարաւի հայ երիտասարդութիւն չէ՞ մնացած: Լաւ գիտենք թէ վաղուց արդէն սփիւռքը մնայուն գոյավիճակ մը եղած է ու պիտի մնայ իբր այդպիսին իր հազարաւոր երիտասարդութեամբ: Սփիւռքը իր մեծ դժուարութեանց դէմ հարկ է պաշտպանել ուսումնական աշխատանքով յատկապէս, երիտասարդութիւնը հայկական լիիրաւ ուսումնառութենէն ետք առաջնորդելով արեւմտեան ուսումնարաններ: Բարեգործականի հարիւրամեակը միայն այս ձեւով կարելի է յիշատակել, դրական, ուղղակի եւ հարազատ մօտեցումով:

Երջանիկ ենք միշտ լսելով բարերարներուն ներդրումն ու նպաստը Միութեան գանձին, եւ սակայն այդ գանձը, ինչ ձեւով որ կարելի է, հարկ է որ հարիւրամեակի այս բարեղէպ առիթով, նպաստէ հայ երիտասարդի ուսման, ճիշդ այնպէս ինչպէս Մելգոնեան հաստատութիւնը կատարեց ցարդ, ու աւելիով նպաստել անոր քաջաբար, պայմանները նոյնիսկ բարեփոխելով: Դրանք չէ որ պիտի պայմանաւորէ մարդը, այլ ճիշդ հակառակը, մարդն է, ինչպէս հաւատացին բազմերախտ բարերարները Մեծ Միութեան, որ պիտի ճշդէ դրամին ճակատագիրը հակառակ ուղղութեամբ կարդալով զայն:

Արդեօք ժամանակ մնա՞ց այդ մասին մտածելու: Քաջութիւն եւ կարեկցութիւն պէտք է տեսնելու համար որ ինչպէս կարելի կ'ըլլայ պատուաւոր կերպով տօնախմբել Միութեան Տարիւրամեակը, սրբագրելով Մելգոնեանի ճակատագիրը ու դուրս գալով այդ թնճուկէն, դարձեալ պատուաւոր կերպով: